«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

---

24 նոյեմբերի, 2026 թ. N 24 - Լ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 25-Ի N 2-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) կանոնադրության 14.17.14 կետը՝ Պալատի խորհուրդը որոշում է՝

1. Պալատի խորհրդի 2026 թվականի փետրվարի 25-ի N 2-Լ որոշման հավելվածի «Ծախսեր» բաժնում կատարել հետևյալ փոփոխությունը.

ա) ավելացնել 2.5 տող՝ «Արտաքին գնահատման փաստաթղթերի հավաքագրման և պահպանման ծախսեր» Չափի միավորը՝ «տարի», Քանակը «1», Վճարը՝ « 1 200 000», Գումարը՝ « 1 200 000»,

բ) «Ընդամենը 2-րդ խումբ» տողում՝ «19 950 000» թիվը փոխարինել «21 150 000» թվով,

գ) «Ընդամենը ծախսեր» տողում՝ «240 180 800» թիվը փոխարինել «241 380 800» թվով,

դ) «Ավելցուկ» տողում՝ «4 832 867» թիվը փոխարինել «3 632 867 » թվով,

2. Կատարել 2026 թվականի փետրվարի 25-ի N 2-Լ որոշման հավելվածի հոդվածի տեքստի խմբագրական լրացում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Պալատի պաշտոնական կայքում հրապարակման պահից:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ **ԹԱԹՈՒԼ ՄՈՎՍԻՍՅԱՆ**